

ԲԱԺՆԵԳԻՆ

ԵԳԻՊՏՈՍ  
Տարեկ. 50 ղրշ  
Վեցամս 25 "

ԱՐՏԱՍԱՀԱՐՆ  
Տարեկ. 13 ֆր  
Վեցամս. 7 "

Ամերիկա  
2 Տղ. 30 սէնդ  
ԿԱՆԻՍԻԿ  
→←



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ  
չեն տրուիր

Դասնուցումներ  
մասնաւոր պայ  
մաններով:

Հասցէ

DIRAN  
PAPAZIAN  
ALEXANDREI  
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Թիւր 1 Ղրշ. ողջ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Ը. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 3 ՀԻՆԴՇԱԲԹԻ 1904

ԹԻԻ 296

## ԱԶԳԱՅԻՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻՆ  
ՏԱՐԵԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Երէկ իրիկուն բաղաբիւ Զեմինիա առաջնակարգ  
Թատրոնին մէջ արտասովոր շքեղութեամբ տրուեցաւ  
Թանկատու գեղարուեստական թատերախաղին ներկայացումը՝  
ի նպատակ տեղւոյ Աղբատախնամին, ընդ բարձր հովա-  
նաւորութեամբ Ն. Վսեմութեան Աւրա համ Բարթոլ  
Բաշայի:

Մենք պիտի չը խօսինք ո՛չ թատերախաղին և ո՛չ  
ալ արուեստագետներուն վրայ, որոնք մեծ համբաւ կը  
վայելեն արդէն միջազգային բոլոր շքանակներուն մէջ:

Կարգադիր Յաննախումբը, որ կը բաղկանար Վսեմ.  
Զարեհ Սվալլը Պէյէն — Նախագահ, Ալն. Միհրան  
էֆ. Թէլեանէ — Գարտուղար, Ալն. Յակոբ Բարթոլ  
Պէյէ — Գանձապետ, ամեն ջանք ու անձնուիրութիւն  
ի գործ դրած էր այս տարուան ներկայացման տալու հա-  
մար նմանը չտեսնուած փայլ մը ու շքեղութիւն մը:

Նախագահը՝ Վսեմ. Զարեհ Սվալլը Պէյ, մեր հա-  
սարակութեան անխնայ, գործունեայ և ազգեցիկ անձ-  
նաւորութիւններէն մին է, որ ամեն տարի չը թերանար  
երբէք իր բոլոր ուժն ու տաղանդն ի սպաս դնելու գե-  
րաջանցօրէն մարգարտական ու ոչ նուազ ազգասիրական  
այս նուիրական գործին, հետեւաբար յիշեալ ներկա-  
յացման արդիւնքն ալ խիստ փայլուն պիտի ըլլայ, բա-  
նի որ Զեմինիայի օթեակները, ամբողջ արահն ու վեր-  
նասունը լիփլեցուն էին, այն քան մեծ էր հանդիսա-

տեսներուն թիւը: Աւելցնենք այս թիւին վրայ ուրիշ առ-  
նաւելութիւն մը, զոր կը պարտինք Վսեմ. Բարթոլ բա-  
շայի հովանաւորութեանը և իր գնահատելի առատա-  
ձեռնութեանը, որով Նորին Վսեմութիւնը հաճած էր  
այս տարի ինք ստանձնել թատրոնի շքեղադարձման բա-  
ցառիկ ծախքերը, այն ատեն կրնանք հաստատել թէ այս  
տարուան հասոյթը կը գերազանցէ նախորդ տարուան-  
ները:

Ուրախութեամբ նշանակելով այս ամենը, կը փու-  
թանք տեղւոյ հասարակութեան գոհունակութեան թար-  
գման հանդիսանալով շնորհաւորել Կարգադիր Յաննա-  
խումբն և թաղ. խորհրդոյ Վսեմ. Ատենապետն, որ իր  
բարձր հովանաւորութեամբը հաճեցաւ պատուել սոյն  
շքեղ երեկոյթը:

Կը մաղթենք սակայն որ սոյն ներկայացումը գրա-  
ւական մը ըլլայ մեր հասարակութեան ամեն դասա-  
կարգին մէջ համերաշխութեան ոգին զարգացմանը,  
որով միայն իրաւունք կրնանք ունենալ հպարտանալ ու  
ինքզինքնիս երջանիկ համարել:

Տփղիսի Հայ կուսաստանի մայրապետ Բէբրո  
նէ՝ 90 տարեկան հասակի մէջ նախորդ ամսոյ 17  
ին վախճաններ եւ մարմինը՝ շքեղ յուզարկաւոր-  
ութեամբ՝ ամփոփուել է եկեղեցւոյ գաւիթը:  
Դարաւոր ժամանակէ ի վեր հիմնուած է այս կու-  
սաստանը, ուր կան Ս. Ստեփաննոս անունով ե-  
կեղեցի և կոյսերու բնակութեան յատուկ խուցեր:  
17 հոգիէ կը բաղկանայ միաբանութիւնը, որոնց  
13ը Սարկաւադ ձեռնադրուած են, իսկ չորսը  
Դպիր:

## ՀԱՍՈՑԹԸ

Վերջին պահուն ուրախութեամբ տեղեկացանք թէ երէկ գիշերուան տրուած ներկայացումէն 350 ոսկի գոյացած է ի նպաստ Աղքատախնամի սնտուկին, Ն. Վսեմ. Բարթող բաշա խիւտ գոհ մնալով Վսեմ. Զարեհ Պէյ Սվազլըի Աղքատախնամի մասին ի դործ դրած գնահատելի անձնուիրութենէն, փողկապի աղամանդեայ ծանրագին գնդաոնդ մը նուիրած է Վսեմ. Պէյին,

Ն. Վսեմ. Բարթող բաշա՝ օտարազգի Աղքատախնամներու մասին ալ իր օրինակելի հոգածութիւնն ի դործ կը դնէ, մեծաքանակ առնելով ամեն ատեն անոնց նուիրատուներէն ու թատերական երեկոյթներու տոմսերէն, որով օտարազգի բարձր անձնաւորութիւնք ալ փոխադարձաբար մեր Աղքատախնամի երեկոյթները սիրալոյսով կը պատուեն:

Պատիւ ուրեմն այն ազնիւ ու մեծասիրտ անձնաւորութեանց որոնք կը ջանան թեթեւեղ ու աւոքեղ մեր գաղթականութեան տառապանքները:

Տեղւոյ Տիգրան Երկաթ Ժողովրդային Միութեան ընթերցարանը վաղուքէ սկսեալ հասարակութեան համար բացուած է: Պաշտօնական բացումը քիչ օրէն տեղի պիտի ունենայ:

Յառաջիկայ կիրակի գիշեր (մարտ 6) տեղւոյ Խորվական թատրոնին մէջ Արքունական դերասանուհի Օրիորդ Յէլէկեաններու մասնակցութեամբ առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացուի Մէդէա անուն ողբերգութիւնը, և որուն պիտի յաջորդէ «Երկու անմեղ նշանածներ» անուն ծիծաղաշարժ զաւեշտը:

Քաջայոյս ենք թէ քաղաքիս Հայ թատերասէր հասարակութիւնը Գահրէի ազգայնոց պէս պիտի փութայ իր արդիւնաբեր ներկայութեամբը պատուել երկու տաղանդաւոր արուեստագիտուհի քոյրերը որ պարծանք մ'են մեր համայնքին:

— Պոլսոյ առաջնակարգ գրագէտուհիներէն Տիկին Զապէլ Հ. Ասատուր (Սիպիլ) ուրիշ մէկ քանի գրագէտուհիներու հետ որոշեր են կանանց յատուկ պարբերական հանդէս մը հրատարակել:

— Ս. Պատրիարքի կրկնակի դիմումներուն վրայ՝ Երուսաղէմ երթալիք քննիչ յանձնախումբին պէտք եղած անցագիրը տրուեր է:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

## Մակերոնիա

Ալպանացիները ապստամբած են, ու վերջերս թուրք զօրագունդերուն հետ ընդհարուելով անոնցմէ ամբողջ վաշտ մը փճացուցած են, Հրամանատար Շէմսի բաշան վիրաւորուած է. Իրաւ է որ առայժմ ապստամբութիւնը Տիարովայի շուրջը կը դառնայ, բայց շուտով պիտի տարածուի ամբողջ Հին Սերպիոյ մէջ և թերևս Ալպանիոյ մէջ ալ դէպի Շքոտրա, Տէպրէ, Եանեա, ևն. Կըսուի թէ 30,000 ապստամբներ զէնք առած են ու կը կռուին, ամենքն ալ ալպանացի ցեղախումբերէն:

Թուրքերը կ'ուզեն հաւտացնել թէ իրենք յանկոտրժակի եկած ըլլան ալպանական ապստամբութենէն, զոր անտարակոյս իրենք պատրաստած են բարենորոգումներու դործխորութիւնը արգիլել տալու համար և կամ Աւստրիոյ զինուորական շարժման դէմ պատասխանած ըլլալու համար: Հետեւեալ թուրքերը Վերիսովիչի շուրջը Իւսքիւպ-Մէթրովիձա գծին վրայ մեծ թափով զօրք կը թափեն:

Սելանիկէն քաջուած թրքական հեռագրիմը նայելով, Շէմսի բաշան որ ալպանացիներէն պաշարուած էր իր 2500 մարդերովը, Տիարովոյի եւ Իքէկի մէջտեղ օգնութիւն ստացած է, և բոլոր թէ պաշարողներն ալ որոնք 20,000 հոգի են եղեր ցրուած ու փախած են (?), 800 մեռելու ու վիրուոր թողլով պատերազմի դաշտին վրայ:

## Ռուս-ձաքոնական պատերազմը

Բեզրսպուրի 2 մարտ. — Զօրավար Քիուս-բաթկին՝ պատերազմին ընդհ. հրամանատարը ամսոյս 12ին Մանչուրիա պիտի մեկնի:

Բօրթ արթիւրի վրայ եղած ձաքոնական յարձակումները փոթորիկին պատճառաւ ատենէ մը ի վեր ընդհատուած են:

Խոքիս. մարտ 3 — Արքունի պահապան զօրաբաւինը և ընդհ. սպայակոյտը նաև նստած են երթալու դէպի Քորէայի արեւմտեան եզերքը:

Պերլին. — Ռուսիա ալ պիտի չկարենայ պընդել Քորէայի անկախութեան կամ չեղութեան

վրայ, քանի որ Ճարտնի և Քորէայի միջև դաշնակցութեան կնքուիլը պաշտօնապէս հաջորդուած է տէրութեանց գահի ճնշման:

Լոնտրա — Մանչուրիոյ երկաթուղիին վրայ ճամբորդութիւնը խիստ դժուարացած է. տոնն վայրկեան պէտք կը լլայ կանգ առնելու: Յուրաքանչեւ քան թիւս փոթորիկներ Պայքալի լիճը կ'աւելնէ. կը պատմուի թէ հազարէ աւելի ռուս զօրքեր սառած են: Շոգեկառքերը ձիերը կը քաշեն լիճին վրայ որ սառած է:

Բորթ արթիւր — Զօրավար Մակարով որ ռուսական նաւատորմի ի հրամանատար կարգուած էր, ամսոյս 1ին հոս հասաւ:

Բեգրսպուրկ — Ռուսական զօրագուններ կը համախմբուին Եալու գետին երկու եզերքները:

Բարիզ — Տ'Ասաս յաժառորակը և չորս թորփիլանաւեր Մայրագոյն արեւելք մեկնեցան:

Լոնտրա — Անգլիա ի պահանջել հարկին Մալթայի զօրաբանակէն երկու հազար զինուոր պիտի զրկէ Զինատան:

Առջի օրը պատերազմէն կարեւոր լուր մը հասած էր հեռագրով, որուն նայելով ճարտնական նաւատորմի կատաղաբար ռմբակոծած է Բորթ արթիւրը: Ռուսական Ասգուտ, Նովիք և Վայան մարտանաւերը դուրս ելած են գիմպերելու համար բայց ստիպուած են ետ քաշուիլ: Ասգուտը նկզմնու վրայ էր. Նովիկ ծանրապէս քնառած, թորփիլանաւ մը ընկղմած, իսկ Բէտովիզան անգործածելի եղած է:

— Բորթ արթիւրէն քաշուած ուրիշ հեռագիր մ'ալ կը ծանուցանէ որ ծովակալ Ալէքսիէֆ երգում ընել տուած է իր զօրքերուն մինչև ցմահ մաքառիլ, և ինք յայտարարած է որ մինչև վերջին շունչը պիտի պաշտպանէ բերդը և անձնատուր չպիտի ըլլայ:

— Գերմանիոյ կայսեր հրաւերով Հոռովի ամերիկեան զեռպանը Պերլին գացեր է, խորհրդակցելու համար թէ կարելի է արդեօք որ տէրութիւնք միջամտեն Ռուս-Ճարտնական պատերազմին:

Գերմանական Հանսա յաժառորակն Բորթ արթիւր ուղևորեցաւ գերման հպատակաց ընտանիքները առնելու համար:

Վիեննա — Պաշտօնական օրաթերթը Աստրօ-Հունգարիոյ չեզոքութիւնը յայտարարեց:

Լոնտրա — Մեծն Բրիտանիա բացատրութիւն պահանջեց Ալէքսիէֆ ծովակալէն՝ Բորթ արթիւրի անգլիական նաւուց գէմ դրուած ար-

գելքին համար. բաց ասկից, բողոքադիր մըն ալ պիտի զրկէ ի Բեգրսպուրկ, ռուս մարտանաւ մը կողմէ անգլիական Թուրինի շոգենաւին վրայ կրակ ըլլալուն համար:

### Փոքր Թղթասար

Պ. Հրանտ Ալատին ի Գահիրէ — Վեց ամիս առած թերթերնուդ փոխարժէքը՝ 25 դահեկան այլ ևս վճարեցէք:

## ՏԵՂԵԳՆԵՐ

Աժանս Բոժոժիկ և Ընկ.

Քալիֆօրնիա

Կրկնամուսնութիւնները գիւրացիները երկրորդ անգամ փեսայացեալներէն ՈՍԿի մրցանակ ստացող Մեծաւորը խղափրութեան տիտղոսն ալ հազաւ վերարկուին տակէն:

Նոյն

Հոս թղթախաղը Քիւրքիք կընթանայ: Մէկ քանի տիկիներ որոշեցին խնդրել Քրէտի Լիօնէէն իրենց հոշիւ մը բանալ՝ Գոնդ գոռան Տը ժէօ անուամբ:

Սուգ էլ Փըռթ

Անուանի զբօսարանի մը տնօրէնը մտադիր է Միլիթին մեծ շիֆիսաւիօն մը ընել իր գառկա-պիլիքին վրայ, ի հեռուկա նպարտաճառ Ղարալամպօսի որ յանդիմած է իր ախշամիները յափշտակել: Բաքոսակաւք յուսարից՝ ձեռուրին շփելով՝ անհամբեր այդ օրուան կ'սպասեն:

Շէրիֆ բաշա

Տօթթօն մը՝ Շէրիֆ բաշայի անցորդաց ուշը դրաւելու համար՝ հագած բաց-գոյն բարձրահին վրայէն՝ անկէ վեց մատ կարճ և քալթօ մը ըսկսաւ հագնիլ:

Ագտարէն

Ըստ ընկալեալ բարի սովորութեան, Զատկուան նոր ֆիստան շինել տալու խոշորները այժմէն սկսան մէկ քանի տուններու մէջ: Պօլիկտոս աղան՝ առ խաղթներէն աղատուելու համար որոշեց մինչև Զատիկ խանութը պառլիլ. ուստի երկու շաբթի առաւօտ վերմակն ու բարձր պօխճա մը ըրած՝ խանութ տարաւ:

ԱՌԱՋԻՆ ՍԷՐՍ  
(ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ)

Ասանկ չէի ես, ան ատեն գիրուկ, աղուորիկ կրծուկիք տղայ մըն էի, և Բուբուլը կը սիրէի, Բուբուլ, ի՞նչ ալ աղջիկ Բուբուլը, հիմա ուր անանկ աղջիկներ: 16 տարու կայի չկայի, սիրտս շատ փափուկ էր այն ատեն, հիմա ալ բամպակի պէս է, բայց տարիները որ անցան անկէ ի վեր . . .

Բուբուլ պոնտիկ մըն էր, աչքերս բացած օրէս, ինչ մեղքս պահեմ, հոգի կուտամ խարտեաշներու համար: Չեմ գիտեր ո՞ւր, ոչ ալ ինչպէս, սա գիտեմ որ այսօրուան պէս օր մըն էր, երբ Բուբուլը տեսայ ու սիրեցի . . . յուզուեցայ, ինքնիրմէս ելայ, որովհետեւ Բուբուլ պոնտիկ մըն էր: Քիթ մը ունէր թափծու, բերան մը նոր բացուած վարդի կոկոնի պէս, շրթունքներ՝ ելակի պէս կարմիր, մորթ մը նո՛ւրբ, թափանցիկ որ եթէ սաչափ դպէր քեզի՝ ամբողջ մարմնովդ կը գողգոլայիր . . . և ես ասանկ աղջիկ մը սիրելուս համար յանցաւոր էի . . .

Սէրը ինչ է չէք գիտեր, սէրը՝ բացատրեմ, սէրը՝ բան մըն է բան մը՝ որ բանի մը չի նմանիր, և և այս բանը կը կոչուի սէր, հասկցաք կարծեմ, այո՛, որոշ խօսեցայ և ես ալ բռնուած էի սէրէն:

Օհ, ալ չէի կարող դիմանալ, օր մը որոշումը տուի, սիրտս պիտի բանայի Բուբուլին, բայց ինչպէս, ահա խնդիրը: Իրիկուն մը գլուխս երկու ավերուս մէջ առած՝ սագի պէս կը մտածէի . . . միջոց մը . . . ախ միջոց մը Բուբուլին հետ աեսնուելու, երբ, ի՞նչ սերախութիւն, իմացայ որ անոնց տունը սուտի մը պիտի տրուէր, հըրաւիրուած էի . . . ե՛ս . . . հրաւիրուած, եթէ Գառնէկի 45,000,000 տուարով իր աղջիկը ինծի տար, կը մ:րժէի, Աստուած վկայ: Ի՞նչ բազդ Բուբուլս մօտէն տեսնել, անոր անուշ ձայնը լըսել, Բուբուլս շօշափել, ի՞նչ երջանկութիւն, ալ պիտի ըսէի իրեն թէ կը սիրէի . . . նախ «չէ» պիտի պատասխատէր կարմրելով, «չէ մի ըսեր հոգիս» պիտի ձայնէի «մի՛ չարչարեր զիս պէքաֆիկս . . . մի՛, վաղուընէ թողախտ ըլլամ ու մեռնիմ պիտի, անցողիկ հրեշտակս» առ խօսքերուն չպիտի դիմանար Բուբուլ, պիտի թոյլնար ու «քուկդ եմ» պիտի ըսէր . . . «Բուբուլ իմա . . .»

Միայն պէտք էի հրապուրիչ ըլլալ այն իրիկուն, օր մը մնացեր էր ալ, առջի գիշեր նա՛ աչք չի գոցեցի, քունս չէր տարած . . . ձերը կը տանէր . . . առտու մութնալուսուն անկողնէն նստուեցայ:

տեսնել, սափրիչին գացի ածիլուեցայ, ժամ մը ամբողջ հոն անցուցի. գլուխս, քիթս, բերանս, յոնքերս ու ականջներս ձեռի դնել տուի, անանկ որ երբ անկէ դուրս ելայ՝ ծառէն նոր բրցուած տանձի պէս ուտուելիք էի: Յետոյ սքանչելի փողկապ մը գնեցի, ճերմակ վարդ մը, Բաբալեաններու վաճառատունէն մետաքսէ թաշկինակ մը, ֆիֆունկֆու չինական ամենավերջին հոտը և դեռ շատ բաներ: Իրիկուն հայելիս դիմացը անցայ ժամերով թօայէթ ըրի, մինչև որ փողկապըս կապեցի՝ հազար անգամ քսեցի էի: Է՛հ, եկաւ սակայն ժամ մը ուր անդիմադրելի դարձած էի, ամբողջ մեղք, քաղցրութիւն կը կաթկթէր գլխուս մազերէն սկսեալ մինչև ոտքերուս. օհ ներեցէք, հոս պլտիկ խոստովանութիւն մը, ոտքերս, բայց կաղաչեմ ուրիշին բան մի՛ ըսէք, սատեղ անդորոնու ենք արդէն. բայց վերջապէս բան մը չէ, կը նայիս վաղը կը տարածայնուի. ոտքերս . . . խոշոր են, սարսափելի խոշոր, բառին լայնագոյն առումովը, ասիկա մեծ անպատեհութիւն մըն էր: առաջը պէտք էր առնել, անոր համար զոյգ մը կօշիկ ապսպրեցի կօշկակարիս, խնդրելով որ ոտքերս կրցածին չափալը տիկցնէ. մարգուկը միտքս հասկցաւ և իրաւ որ անանկ զոյգ մը կօշիկ պատրաստեց որ՝ միմեօն ոտքեր եղեր էին իրիկուններս. ի՞նչ ընէի ուրիշ ճար չկար . . . նա՛ սաչափ, 40 սանթիմէթ օտքերով «կը սիրեմ» կըսուի մի:

Վերջապէս ատուր ալ դարձանը գտած էի, անթերի ֆօնէպ մէկը դարձած էի. հագուած, շքուած, մազերս սանտրած, ճերմակ վարդը լամբակիս, մետաքսէ թաշկինակը գրպանս, ֆիֆունկ ֆու չինական հոտը վրաս. դեռ ըսեմ. նա՛ մէկ բառ՝ անդիմադրելի:

Ժամը 10, թա՛ք դուռը. կառքն է, մէջը կը նետուիմ, քառորդէ մը հոն եմ, անմիջապէս տունէն ներս կը մտնեմ. նախ տան տիկինին և էֆէնտիին կը մօտենամ, քանի մը շատ սիրուն քաղաքավարական խօսքեր կըսեմ. գոհ կը մնան: Է՛հ ի՞նչ ընել, անոնց ալ անուշ ըսնել պէտք էր, Յետոյ Բուբուլին քովը գացի դողդալէն, ամբշնալէն ճանա մը խնդրեցի. եթէ կը հաճի, երբ որդե վաղը շնորհեց ինծի, վարպետորդին, մասնաւոր այդ պարը տուաւ ինծի որպէս զի հեռու օրորուի ու . . . օրորուի:

Եւ ես անհամբեր կ'սպասէի որ կարգս գտը, ինչպէս իր սիրտը աղջիկը առեանգելու վրայ եղող սիրահարը կ'սպասէ որ . . . կատքը դայ:

Ի՞նչ դժուար բան սպասել, սիրել և ըսպասել. աչքերս խոշոր բացած կը գիտէի Բուբուլի փայլալիները, ինչո՞ւ հետը կը պարէին, պատառ պատառ ընելի կուգար զանոնք. սիրոյ

նախանձը բոյն դրած էր ներսս և բարկութենէս  
կեցած անդս կը հեւայի :

Մէյ մ'ալ, ատ էր պակաս, ապուշին մէկը  
անուշադրութեամբ ոտքիս կոխեց . . . Օխ, ինչ  
ցաւ էր Աստուած իմ, սոսկալի ցաւ մը սկսաւ,  
կոշտիս ցաւը, դիմացուելիք բան չէր, ճար մը  
գտնել պէտք էի, ո՛չ կենալ կրնայի, և ո՛չ նըս-  
տիլ, խեւ դարձած էի, կօշիկիս նեղութիւնը ալ  
չափ չունէր: Վերջապէս սրտշումս տուի, կամա-  
ցուկ մը սրահէն դուրս սպրդեցայ, ծածուկ ան-  
կիւն մը քաշուեցայ, խօսքը մէջքէնս, ինչ կը-  
նեն կրնե՞րը երբ կը նեղուին, չէ՞ որ forսենին կը  
հանեն, ես ալ, ճիշդ նոյնպէս ըրի, նախ կօշիկս  
հանեցի, յետոյ . . . հանեցի, հանածս կը հասկը-  
նաք անշուշտ, խնամով ծալլեցի ու գրպանս դրի,  
հիանալի դիւտ մըն էր սոս, հաւատացէ՛ք. վեր-  
ջէն երբ կօշիկս հագայ. . . ոտքս լայն տեղ գտ-  
նելով հանգստացած էի:

Իսկոյն պարտորահը եկայ. սիրտս թիւք թաք  
կը զարնէր, պարելու ժամը եկած էր. վախով  
Բուբուլիս մօտեցայ, թեւ առի. վալս մը դար-  
ձան քմիասին. ի՛նչ հեշտանք. ալ խորհրդաւոր  
րոպէն հասած էր. պիտի ըսէի. գաղտնիքս դուրս  
պիտի տայի. նախ երկար շունչ մը առի. ուժ  
պէտք էր. և սկսայ Օրի . . . օրի . . . օրիորդ. —  
օհ չէի կրնար խօսիլ. խօսքերը կը թափթփէին  
բերնէս. փորձ մըն ալ. — Օրիորդ . . . ո՛հ, որ-  
քան . . . զխոնայիք. Օրիորդ . . . Օրիորդ. —  
երանի՛ թէ բնաւ չսկսէի. ջուրի պէս քրտինք  
մը սկսաւ կաթկթիլ ճակտէս. ձեռքս մեքենա-  
բար դրպանս տարի թաշկինակս հանելու ֆի ֆու  
ֆունկ շինական ամենավերջին հոտով . . . և հա-  
պիւ զայն դուրս հանած՝ սոսկալի խնդուք մըն է  
փրցուց Բուբուլ. ի՛նչ կար Աստուած իմ. ամեն-  
քին աչքերը վրաս դարձան. վայրկեանէ մը  
ամբողջ որահը խնդուքներու մէջ կ'որոտար.  
միւզիւքը դադրեցաւ. օհ, ի՛նչ կտր, ի՛նչ կար.  
մէյ մըն ալ ի՛նչ կուզէք որ տեսնեմ. գծո՛խք.  
ձեռքս բռնե՛ր էի թաշկինակիս տեղ . . . գուլ-  
պտո՛ս!!!

Ա. Մ.

Հետադարձ  
Ղ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

### ՎԱՀՈՆ ՄՈՄՃԵԱՆ

Գահիրէ Ապտինի գարագօյին գէմը, Սփինք-  
դեղարանին կից, և Շարա Մուհամէտ ալիաթը՝  
ֆէթ — էլ — էնէպա, թիւ 1

Կը պատահէ ոսկիէ եւ արծաթէ զարդանկար  
(միւնէի) եւ դրուագեալ զարդանկար:

## Ծ Ի Ծ Ա Ղ

ԴԻՏԵՑԷՔ . . . ՄԻՇՏ ԿԸ ՆԱՅԻՆ

- Դերձակը՝ հագուստիդ:
- Կօշկակարը՝ կօշիկներուդ:
- Մայրը՝ իր զաւկին ձեռքը:
- Վարժապետը՝ օրացոյցին:
- Խա՛նութեանը՝ դրամագլխին:
- Փետան՝ առնելիք գումարին, և ո՛չ աղջը-  
կան . . . :
- Հոգեւարք մը՝ միշտ անկիւնը:
- Թուլ ամուսին մը՝ կնկանը խօսքին:
- Խմբագիրը՝ նամակատան ցրուիչին:
- Խօսք չգիտցող հիւր մը՝ միշտ ժամացոյցին:
- Սիրահար աղջիկ մը՝ լուսինին:
- Ցատկեւձի միւսինները՝ սուառէի՝ անունի:
- Վրտձգոց մը՝ մէկ բերան հրաւերի:
- Բժիշկը՝ դռան զարնուելուն:
- Ծոյլ դպրոցականը՝ մօն օրերու:
- Գրագիր մը՝ բաթօսին աչքը:
- Մուխոֆձի տուտունները՝ պատուհաննե-  
րէն դուրս:
- Ղեկավարը՝ նաւապետին:
- Խաղամուլը՝ բաղդին:
- Երախան՝ մօրը կուրծքին:
- Որկրամուլը՝ միշտ ճաշարաններու ցուցա-  
փեղկին:

ԱՍՏՂ

Բոժ. — Մեր տուտնորդն ալ՝ «տեսնուինք» ին:

Երեկոյթի մը մէջ, դարձող զոյգերէն մին  
գետին կը գլտորի:

Օրիորդը շիկնելով.

— Ներեցէք պարոն՝ այդչափ արեւալ վի-  
ճակնուդ մէջ, ի՛նչպէս համարձակեցաք զիս պա-  
րի հրաւիրել . . . :

Երիտասարդը որ նուազած վիճակի մէջ հա-  
պիւ կը ցած էր ոտքի ելլալէ, կտրուկ շեշտով մը.

— Ուրիշ անգամ խնդրեմ . . . ուշադրու-  
թիւն ըրէք, եփաղոնի մօտ ձեր կուրծքին վրայ  
պահած շիշերնիդ . . . քոռօթօն էր օրիորդ . . .  
սխալեր էք . . . :

— Քիթդ հոն ի՛նչ բան ունի . . . կը պատաս-  
խունէ քաներբորդ դարու Եւայի զաւակը . . . :

—Քիչով շատ ցուցունելու հակամէտ երիտա-  
տարդ մը, ձեռք մը հագուստ կտրել կատայ դեր-  
ձակին: Ու կիրակի առաւօտ մը հագուած շքու-  
ած, երբ կուղէ եկեղեցի երթալով աթ մը բը-  
ռէջանա մը ընել հոն, կը նշմարէ որ բանթա-  
լօնին պրպանները իրենց բացակայութեամբ կը  
փայլին ուստի դերձակին վազելով կըսէ.

—Բարեկամ, ո՞ւր են պրպաններս . . .

—Մտածեցի որ հիմակու իմա պէտք չունիք  
ատոնց. կը պատասխանէ սրամիտ դերձակը:

—Մօ Երուանդ, խեղձիք քի երեսներդ ա-  
լուրեր հա . . .

—Բարեկենդան է մայրիկ, զարար չունի . .

—Մօ հիմա ինտո՞ր պիտի թէ մուշկունես:

—Պուն ըսէ մայրիկ, ամէն օր ինտո՞ր քու  
երեսդ կը մաքրես . . .

Բժիշկ մը, իր յետին վայրկեաններուն ի-  
րենները քովը կանչելով.

—Վերջին անգամ՝ կըսէ իր սիրելիներուն,  
կը փափաքիմ ի սրտէ, որ չիս դերեզմանէն  
դուրս թաղէք. որովհետեւ գիտեմ թէ . . . կա-  
ւելցնէ ճշմարտախօս գիտունը, հոն սխալով զոհե-  
րըս հանգիստ չպիտի թաղուն:

Աշխարհագրութեան նոր սկսող տղուն՝ հայ-  
րը կը հարցնէ.

—Մօ Լեւոն, ըսէ նայիմ, աշխարհիս ամենէն  
բազմամարդ տեղը ո՞ւր է:

—Մեր տունը . . . կը պատասխանէ սրամիտ  
լակոսը . . .

## Վ Ի Պ Ա Թ Ե Ր Թ

Հրատարակուեցաւ Փետրվարի թիւը հետե-  
ւալ բովանդակութեամբ.

1. Մերժումը Սէր. Պոլսական կեանքի դրուագ-  
ներ. դրած է. Պ. Ե. Սրմաքէշխանլեան. 2. Տը-  
րաններ եւ Կաղսնիք Հաւաստեցնութեան հեղի-  
նակութիւն Պ. Պ. Մառիօյի և Լօնէյի. 3. Խորհր-  
դաւոր դաս մը. հեղ. Փօրթիւնէ տիւ Պօակապէի.

Տարեկան բաժնեգրին է Եգիպտոսի համար  
6 ֆր. Դիմել հետեւեալ հասցէին.

Օճնիկ Բարսեղեան

Էմքոսիւրնի Օրիէնթալ, Վառնա (Պուլկարի)

## ՁՄԻՌՆԻԱԿԱՆ ՀԱՅ ՆՊԱՐԱՎՈՃԱՌԱՏՈՒՆ

### Մ. ՊԸՏԸՏԻՄԵԱՆ

Թրիպոնալի ետին՝ հօթէլ «էն ժօրժի կից.

Ամեն տեսակ շաւ նպատեղեցներէ զատ, Ձմիւռ-  
նիայէն քերուած ընկիր օղի, գինի, ձէք, կարագ,  
աճառ, տոպերոյ գոնետրպաներ, պատրաստ անու-  
շեղեմ եւ ոշտրանկեր՝ նարինջ, բայ, քաւմ ընկոյզ  
եւ չում (գրգռք). նաեւ Աղաշէհիւրի հանգային  
ջուրք որ դժուարամարտութիւնը կը դարձանէ.

Սոյն վաճառատները կը խոստանայ իրեն դի-  
մող յաճախորդները գոնացնել անխաղախ անպ-  
րանկներովը եւ գինեւաւ չափաւորութեամբը.

Մեր այս քաւմը հաստատելու համար այցե-  
լորդին մը քաւական է.

Մեծախանակ ու փոքրախանակ յանձնարա-  
ւորքիւնք անմիջապէս կը կատարուին. 5

## ՏՕՔՐՕՐ ՓԱՇԱՅՅԱՆ ԽԱՆ

Խորհրդական Բժիշկ Պարսից քաղաքապետակ  
Իշխանին

Այս անգամ Աղեքսանդրիս հաստատուած շի-  
նեղով, պատիւ ունի յայտնելու յարգելի Հայ հա-  
ւատարմութեան, որ ամեն օր առաւօտները ժամը  
9-էն 12 եւ երեկոյները 3-էն 5 հիւանդներ կըն-  
դունի իր տան մէջ, Աթթարին փողոց քիւ 31,  
Մզկիթին դէմը, երկրորդ յարկ.

Ներքին եւ փրաքութեան հիւանդութիւննե-  
րու հետ, կը դարձանէ նաեւ երախաներու հիւան-  
դութիւնները, 15 արոյ ժամանակահատկան փորձա-  
նորութեամբ:

Յաջող կերպով կը դարձանէ նաեւ Ալթիոնա-  
մոյութիւնը եւ Մորէիւնաւորութիւնը, որունց դէմ  
հնարած է մասնաւոր դեղ մը եւ որուն շնորհիւ  
Պարսկաստանի մէջ հազարաւորներ անվնաս քոյած  
են այդ մոյութիւնը. 8

## ԳՈՒԻՏՈՒՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Նոր Բաղդադի պատկերազարդ, Ֆրանսական  
Երկու հասո՝ 1874 մեծադիր երեսներով:

Ազգ. — Մատենագիրն փափաքելով որ իր երկասի-  
րութիւնն մտաշելի եւ օգտակար ըլլայ բոլոր Ազգին, մա-  
նաւանդ որ իւր նպատակն է ամենին չՀայի, այլ փո-  
սով իսկ վաճառել, որոշած է որ այն երկու հատորնե-  
րը ի միասին 25 ֆրանքէն աւելի չարժեն:

Դիմել հեղինակին հետեւեալ հասցեով.

M. G. DE LUSIGNAN

108, Neuilly-sur-Sein. — France

Յանձնարարութիւնը կանխիկ վճարմամբ